

Ամեն օր կհրատարակուի : - Հատը 20 վարա է : - Պօլիս բաժանորդը ըլլալ ուզողը մէկ արծաթ
Մէճիս պիտի վճարէ 100 թուոց համար , իսկ դաւառաց համար 25 դրը դարձնալ 100
թուոց համար , թղթատարութեան ծախքէ սպաս ըլլալով : - Գանուցման տողը 10 վարայ է
մէկ անդամի համար : - Լրագրի վերաբերեալ նամակ և ուրիշ որ և է դրութիւն պէտք է
ուղղել առ Տնօրէնն ի կ . Պօլիս Չազմաճըլար Եօզուչու Զիւմպիլիս իսն վերի յարկ թիւ 24
սենեակը :

Ա. Զ. Գ. Ս. Ե. Ի. Ն

Շարաթ օրը իւսկիւտարի իճատի-
լէի վարժարանին հիմնարկութիւնն ե-
ղաւ հանդիսաւոր կերպով : Աթեան
Գեր . Յովհաննէս եպիսկոպոսը երկու
քահանայից հետ ներկայ գանուելով
օրհնեց : Հարիւրաւոր գործաւորք նոյն
օրը ճրխարար գործեցին եւ իճատիցէն
ու ուրիշ թաղերէ բազմաթիւ ազգայինք
ներկայ էին այս հանդիսին :

Ռատմաստէր պատուարժան թաղեցի
մը վարժարանին հիմանց մօտ ոչխարներ
մարթել տալով դորձաւորաց բաժնել
սուտա :

Այս կարեւոր շինութեան հետ իճա-
տիցէի ազգայնոց եւ մասնաւորապէս մեծ
օգնութիւններ ընող ձեռնհաս անձանց
փառքն ալ կաւեհաց , որ՝ բաւակա՛ն
Ժամանակէ ի վեր նաեմացած կհամար-
ուէր՝ անյարմար տեղ մը դպրոց - գոց
դպրոց մը - ունենալուն պատճառաւ :

— Ուրախութեամբ կլսեմք թէ Ե-
րուտաղիմայ ամեն . Ս . Պատրիարք Հայ-
րը յատկապէս հրահանգ զրկեր է Գեր .
Արմին եպիսկոպոսին , որ իւսկիւտարի
ձեմարանին բացման կարեւոր գործը
փութացունէ :

— Ամեն . Ս . Պատրիարք Հայրը ուր-
բաթ օրը Բարձր . մեծ եղարդոսին գը-
նաց , Օդոտ . Սուլթանին կողմանէ
վերջին օրերս շնորհուած պատուանշա-
նին համար իւր շնորհակալութիւնները
մատուցանելու պատճառաւ :

Նորին Սրբազնութիւնը նոյն օրը վտեմ-
բեամիլ փաշային ալ այցելութեան դա-
ցեր է :

— Կիւրակէ օրը Ղալաթիոյ Ս . Լու-

սաւորիչ եկեղեցւոյ տօնախմբութեան
օրն ըլլալով Գեր . Տ . Արխտակէս Ս .
Արքեպիսկոպոսը հանդիսաւոր Ս . Պա-
տարագ մատոյց :

— Շարաթ օրը Բումէլի-Հիւարի երկ-
սեռ վարժարանին աշակերտաց հարցա-
քննութիւնն ըլլալով երէկ ալ պարզե-
ւաբաշխութեան հանդէսը կատարուե-
ցաւ : Քննութեան գացող մէկքանի ու-
սումնական անձերէ ուրախութեամբ ի-
մացանք որ երկու սեռի աշակերտք ալ
յառաջադիմութեան վիճակի մէջ կգըա-
նուին եւ միանգամայն՝ մեծ թաղերու մէջ
տակէց աւելի արդիւնք մը չտեսնու իր ,
յորս աւելի ստակ ծախք կըլլայ :

Այս վկայութեան վրայ՝ պարտաւոր
կհամարեմք զմեզ՝ հրապարակաւ շնոր-
հակալութիւն մատուցանել յիշեալ դի-
ղի թաղական պատուարժան խորհրդոյն
եւ խնդրել որ իրենց ուսումնասիրական
ջանքը շարունակեն :

... Խմբագիր

Ձեր պատուական օրագրոյն մէջ թա-
ղիս նորընտիր եւ երբեմն նախկին թա-
ղական Ումէտ աղայի նկատմամբ յօդ-
ուած մը կարգացինք : Արդէն թաղիս
ողջամիտ մասը երեք չորս տարիէ հե-
տէ նոյն անձէն օրինաւոր հաշիւ կը
պահանջէր եւ նա ալ միշտ փախուստ
կուտար , որովհետեւ իր հաշիւներուն
մէջ մատակարարութեան մասին չատ մը
անիրաւութիւններ կար . որոնցմէ մէկ
քանին աւելորդ չեմք համարիր պա-
ուական լրագրոյց միջցաւ հրատարա-
կելու :

Նախ՝ Նեոխմ անուն հրեայ մը իրբու

թէ կը հայացնեն՝ եւ եօթ ութ հազար
գահեկանի չտի մեծագումար ծախս մը
կրնեն, եւ որուն համար մկրտութեան
աւարան մը կը շինուի եւ անոր ալ հա-
զար գահեկան կուտան. աւարկելով որ
այսուհետեւ հրեայք ալ պիտի հայա-
նան, ուստի պէտք է որ հաստատա-
շէն ըլլայ:

Երկրորդ՝ գերեզմանատան խնդրոյն
մէջ (որ այս գերեզմանատան խնդրոյն
մէջ բրած անխրաւ ծախքերնուն ամե-
նախորրագոյնն է) օտար լրագրոյ մը
արդէս թէ յօդուած մը տուած ըլլան
եւ հազար ֆրանգ ալ այդ օրագրոյն
տուակ կուտան:

Երրորդ, որպէս թէ մէկը հիւան-
դացած է եւ տունն ալ մեռնելէն ետ-
քը (մահիւլ) պիտի երթայ, հինգ հա-
զար հինգ հարիւր գահեկան կուտան
իրբեւ. հիւանդին եւ տունը եկեղեցոյն
համար կուտեն որ այն ժամանակը տա-
նը ընելիքը երեք հազար զրոյշէն աւե-
լի չընէր. եւ որ ասկից մեծ անխրաւու-
թիւնը այն է, մարդուն ալ ամիսը հա-
րիւր քսան գահեկան կը կուտեն եկե-
ղեցոյն մետակէն եւ մինչեւ երկու տա-
րի շարունակ առած է այդ հարիւր քը-
տանը մինչեւ հրաժարեալ խորհրդոյ
օրը, եւն. եւն. . .

Արդ . . . Խմբագիր, կողոսքեմք եւ
յուրիան պիտի բողոքեմք այդ անձին
դէմ. մինչև որ իր կախ մնացած հա-
շիւները օրինաւորապէս չիտայ, չի կրը-
նար դարձեալ թաղական խորհրդոյ ան-
դամակցութիւնը ընդունիլ. Ինչպէս
կրնայ մէկը անդային պաշտօնի մէջ մըտ-
նայ մինչդեռ իւր նախորդ պաշտօնե-
ութեանը մէջ հաշիւները չէ մաքրած.
Եսով ո՛չ ասորքէն ամբաստանութեան
տակ ինկած կըլլայ, որովհետեւ վար-
չութեան կողմանէ ալ քանի՛ քանի՛ ան-
գամ հրուէր է կարգացուած. եւ մին-
չեւ անգամ սպանալից նամակաւ որ
իսր հաշիւները ներկայացունէ ու չէ
ներկայացուցած:

Ուստի յանուն արդարութեան կը
բողոքեմք եւ անդային ժողովոյն եւ
ամենապատիւ Ս. Հայրիկին ուշադրու-

թիւնը կը հրաւիրեմք, որ նախ հաշիւ-
ները առնուի եւ ապա թաղական խոր-
հրդոյ անդամակցութեան մասնակցի:

1870 Յունիս 27
Յիւսկիւտար Սեւակէ
Ողբամկա թաղեցի մը

× . . . Խմբագիր

Երբեմն երբեմն Մասիսի էջերուն մէջ Եւ-
դոկիայի երկու հակառակ կուսակցութեանց
կողմանէ գրուած նամակներ կը տեսնուին,
որոնց մէջ անուղղակի կերպով Սերաստիոյ
Մեծնուէր ընկերութեան խօսքը կըլլայ երբե-
մըն. մեր վէճին մէջ մտնել չբռնադատուե-
լու համար պատշաճ համարեցինք ծանուցա-
նել Պ. նամակագիրներուն որ ազգային վե-
ճերին անձնուիրութեան հետ չսխալուին,
ինչպէս որ Սերաստիոյ խնդիրը անգային է,
վասն զի Մեծնուէր ընկերութեան նպատակը
ոչ այլ ինչ է բայց եթէ կիրակի օրերը հա-
սակաւոր ազգայնոց ճիշաբար դասախօսելով
եւ ազգաս աշակերտաց ալ դասադրեր նուի-
րելով ընթերցանութիւնը ազգիս մէջ ընդ-
հանրացնել. եւ այսպէս ալ հրահանգ կուտայ
իր բոլոր ճիւղերուն, բայց երբ իր նպատա-
կին դէմ խօշընդոտ մը տեսնէ՝ մինչ ի մահ կը
մարտի. ուստի, ազգաս ի խմբագիր, բա-
րեհաճեցէք սոյն երկուոն Ձեր պատուական
լրագրին միջոցաւ հրատարակել, որպէս զի
ընկերութեան նպատակը չճանչցողներէ
յարձակումներ չըլլան:

Ի Գիտաց Մեծն. Բնի .
Սերաստիոյ
Գաբրիէլ Աւարեկեան

Խ Ս Ո Ւ Ն Լ Ո Ւ Բ Ե Ր

Դանձային հաշուական աստեանին (ախ-
վանը մուհասէպաթը մալիցէ) անդամ
անուանեցաւ Մէհմէա պէյ, առաջին
աստիճանի առաջին կտրոյի պաշտօնա-
տարութեամբ:

— Մնցեալ հինգ շաբթի օրը բոլոր-
վին վերջայաւ կայսերական թրխտու-
թեան գործը:

— Մայրաքաղաքիս դաղդիական նա-
խորդ դեսպանն այս շաբթու ճամբայ
կենէ:

— Մայրաքաղաքիս սպանիական գոր-
ծակատարը ի պատճենէ ծանուցեր է թէ

Բրուսիոյ թագաւորին ազգական իշխան մը Սպանիոյ թագաւոր պիտի ըլլայ :

— Գանձուց պաշտօնատան մասնաժողովին ձեռօք Պէյոյլուի հրկիզելոց համար ժողովուած ստակին գումարը մինչեւ անցեալ չորեքշաբթի օր 30710 լիրայի հասեր է :

— Գէօթէնէի մէջ ալ Պէյոյլուի հրկիզելոց համար ստորագրութեան տուած մը բացուելով, մինչեւ մօտ օրերս 12013 զրջ հաւաքուեր է :

— Մազբըզիզի ու Ս. յի-սթէֆանօսի կողմերը մարտիս իջեր է, բայց արմատաց մնաս չէ եղեր՝ արդէն վերջուած ըլլալուն համար :

— Հապէչասաանի կօպազի իշխանին որդին Ս. զեհասնդրիս պիտի դայ, եւ անկէջ ալ Պօլսոյ ճամբով վիէննա պիտերթայ եղեր : Հետը խել մը այլանդակ կենդանիներ պիտի գանուին եղեր :

— Շուրայի-Յէվլէթի Միւլաղլա՛ Ղալիպ պէյին երկրորդ աստիճանի երկրորդ կարգի պաշտօնատարութիւն արժուեցաւ :

— Եղիպտոսի բարձր խափը չորեքշաբթի օրը օդ տաւ : Սուլթանին ներկայանալէն յետոյ՝ Պէպէք բարձր մեծեպարքաին ապարանքը դացեր է, բայց նորին բարձրութիւնը Բ : Գուսըր դըանուերուն պատճառաւ չէ կրցեր տեսնուիլ :

Հեանեալ օրը բարձր Սալի փաշան բարձր խափին տեսութեան գացեր է :

Խախվին երկու որդիքն՝ մէկը Աւստրիային եւ միւսն Անգղիային Ազեկանդրիս գործեր են :

— Զրհաններու եւ Զրհանակիրներու փերտերեալ բարեկարգութեանց վրայ խորհելու համար յանձնաժողով մը պիտի կազմուի եղեր ընդ նախագահութեամբ զինուորական գործոց պաշտօնէին, եւ անդամակցութեամբ ստակաւորութեան պաշտօնէին՝ Աէրվէր էֆէնտիին եւ այլոց :

— Գըպըրսէն գրուածին նայելով այս տարի այն տեղուանքը երաշտութիւն ըլլալուն պատճառաւ երկրորդ օրմական

բերքն սուրուած է, եւ ազագայ սովու մը վախով բնակչաց ոմանք ուրիշ տեղեր կգողթեն եղեր :

— Արդէն ծանուցած եմք թէ՛ ըսպանիոյ գահակորոյս թագուհին իւր թագաւորութեան իրաւունքը սրբւոյն ձգեր է : Նոր կլսեմք թէ՛ թագուհին իւր այս անկարեւոր գործը պաշտօնական կերպով Պապին ալ իմացունելով խնդրեր է որ բարեմաղթու գանուի՝ Նորին սրբութիւնը իւր սրբւոյն յաջողութեան համար :

Թագուհին թերեւս չտեսնէր թէ ալխարհ ի՛նչ կըլլայ սպանիացոց թագաւորութեան խնդրոյն համար : Սպանիացիք զինքը եւ որդին ամենեւին չեն յիշեր, այլ այս անգամ ալ Բրուսիայէն իշխանի մը կառաջարկին սր իրենց թագաւոր ըլլայ : Պապը թերեւս մտոցած ըլլայ իւր սրբւոյն համար բարեմաղթութիւն ընելը, ապա թէ ոչ . . . :

Բրուսիոյ թագաւորին ազգական իշխանը՝ որուն կառաջարկուի սպանիական գահը, 35 տարեկան է, եւ Բարթուկալի թագաւորին փեսան ըլլալով՝ չորս մանչ եւ մէկ աղջիկ զաւակ ունի : Կրօնքը՝ հռոմէական է : Մօլթո-վալաքիոյ կալալս իշխանին մեծ եղբայրն է, եւ գնդապետութեան աստիճան ունի եղեր :

— Ռուսաց Ազեկանդր կայսրը վարչալիս հասնելով, ժողովրդեան կողմանէ եռանդազին ցնծութեամբ եւ հանգիստար կերպով ընդունուեր է : Աւստրիոյ կայսեր կողմանէ ալ Արչիգուսս մը դրկուեր է, անոր գալուստը չորհարորելու համար :

— Գաղղիոյ մէջ երաշտութիւնը տակալին կախիլ է, կենդանեաց ճարակ գանելու գժուարութեան պատճառաւ, շատ կենդանիներ լեռները կարծկուին եղեր : Կրսուի թէ՛ փարիզի մէջ թնդահօթային մեծ կրթութիւն մը պիտի ըլլայ, յուսալով թէ թերեւս այսպէս անձրեւ կուգայ :

— Սակէյ 170 տարի յառաջ Բարթուկալի ծովեղերքը Մաղղիոյ եւ Սպանիոյ մէջ ծովային մեծ պատերազմ մը ըլլա-

լով՝ անդդիացիք սպանեալիս երկու հոտ ընկղղներ են, որոց մէջ շատ ծանրագին լաներ եւ ոսկի ու արծաթ մեծազու մար ստակ կգանուին եղեր: Մօտերս գաղղիական ընկերութիւն մը այս գանձը հաներու յանձնառու եղած է եղեր, կէսն իրեն աններու պայմանաւ, եւ արգարեւ մինչեւ հիմայ 200 հազար լիբայի արծողութեամբ բան հանուեր են ծովուն խորերէն:

— Մօտերս ծանուցինք թէ՛ Պօլսոյ պատկերահանք միարանելով ընկերութիւն մը կազմած եւ կայսերական կառավարութեան վաւերացման մատուցած են: Այժմ դոճու թեամբ կրնեք թէ՛ վսեմ: Յաղիլ Մուսթաֆա փաշան բարեհաճեր է այս ընկերութեան պաշտպան կենալ, եւ պէտք եղած օգնութիւնն ընել, որպէս զի իւր նպատակին համար:

— Գաղղիոյ մէջ երաշտութեան պատճառաւ կենդանեաց ճարակ գանուիրը դժուարին ըլլալով, կառավարութիւնը որոշեր է որ կառավարական կենդանեաց յասկացեալ արօմները լաց ձգուին հասարակաց կենդանեաց համար:

— Փարիզի ճամբով Չինաստանէն անուամ՝ հեռագրի մը նայելով Չինաստանի Բէքին մայրաքաղաքին բնակիչները հոն գանուող քրիստոնէից վրայ յարձակելով գաղղիական դեսպանն ու հիւպատոսը եւ լոյրը պատրական կղերն սպաններ, ու եկեղեցիները հրոյ ճարակ ըրեր են:

Ահաւանիկ նոր խնդիր մ'ալ: Գաղղիա անտարակոյս փրէժիսցիը պիտի ըլլայ չինացոց այս բարբարոտական ոճրագործութեան համար:

— Աւստրիոյ կառավարութիւնը 27-271 զօրաց արձակման հրաման տուեր է, եւ հիմայ 325244 զինուոր զէնքի տակ կգանուին եղեր:

Տարմացիոյ սպարապետութեան պատճառաւ 3 միլիոն ֆիորին ծախք եղեր է, որուն 2 միլիոն 100 հազարը՝ Աւստրիոյ եւ 900 հազարը՝ Հաւնգարիոյ դանձր պիտի վճարէ եղեր:

ԿՐԹՈՒԹԻՒՆ ՏԱՃԱԿԱՆ ԼԵՁՈՒԻ
Խ Մ Բ Ա Գ Բ Ե Ա Յ
ՊՕԴՄ Պ Գ Ա Լ Ը Պ Ճ Ե Ա Ն
Գին 10 շը

Մի հէնափսեան սպարանի ստեղծական նոր տառերով ապուած այն գատակրքը ամեն հայ գրաւաճառաց քով կը գանուի, որ կը սրբուհակէ Օսմանեան տառերուն զօրութեան ու կցորդութեանը կանոնները. արդի ոճով գործածական այլ եւ այլ գրութիւններ, Օսմանեան լեզուի մէջ դործածուած Արարերէն համեմայնութեան կանոնները օրինակներով հանդերձ. կառավարութեան պաշտօնական տեղերն ու արտդոսները, եւ դեղեցկագրութեան վարժաթիւնն ըլլալու համար պարտեակամ գրութեանցը ձեռագիրը կրկնաթիւնը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՈՒՍՈՒՄՆ ՊԱՐՏՈՒՑ
Պ Ե Ա Ն Ե Ա Ն Յ

Տարագրութիւն Ռ. Քիրքճեան մաուր թղթի վրայ նորաձոյլ եւ շքեղ տառերով ապուած: Պարտնակութիւնն է Գրիտոնեական եւ բարոյական սպարապետութիւնը մարդոց աւ Աստուած առ մարդիկ եւ առ անձն զրէ աւսումն բովանդակ բարոյականութեան: Խրաքանչիւր օրինակին գինն է 1/2 արծաթ մէճիտ. իսկ գորոցաց համար շատ օրինակի գնողներուն՝ ստան հատին մի հատ տեղի եւ ձրիագար:

Յանկացողք կարեն ստանալ երուսդէ մատանէն, որ է Հայոց Պատրիարքարանի մօտ:

Փառնջի վերաբերեալ որ է գիր այսուհետեւ պէտք է ուղղել Չարմազ ճրար-Նոյուշու Չիւմուշուլի Խան վերի յարկ թիւ 24 սենեակը:

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԼՐ
Հ Ս Մ Ա Ճ Ա Ճ Ա Ն Յ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԴՐԱՆԵԿ ՎԱՐՊԱՆԵՆ
Կ ՊՕԼԵՍ ՁԻՄՊԵՒԼԻԻ ԽԱՆ ԹԻՒ 24